



Ը Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
2013 թ. թիվ 17

ԸՀՄ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

2013թ. փետրվարի 23-ին Երևանում կայացավ Հայաստանի պետիկմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության արտահերթ համագումարը: Բացի համագումարին ներկա պատվիրակներից (56 պատվիրակներից ներկա էին 51-ը), համագումարի աշխատանքներին մասնակցում էին նաև ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալներ Բորիս Խարատյանը, Խաչիկ Առաքելյանը, ճյուղային միության վերստուգիչ հանձնաժողովի անդամներ Նեստան-Դարեջան Մովսեսյանն ու Յողիկ Մկրտչյանը:

Համագումարում քննարկված առանցքային հարցերից մեկը ՃՀՄ նախագահի պաշտոնից Ելենա Հակոբովայի հրաժարվելու և իր լիազորություններն այդ պաշտոնում վայր դնելու մասին էր: Համագումարի պատվիրակները հարգեցին Ե. Հակոբովայի որոշումը և դադարեցրին Ե. Հակոբովայի լիազորությունները նախագահի պաշտոնում և բաց քվեարկությամբ միաձայն ճյուղային հանրապետական միության նախագահ ընտրեցին ճյուղային միության նախագահության անդամ, աշխատանքի պաշտպանության գլխավոր մասնագետ, նախագահության կողմից առաջադրված Անահիտ Մուշեղի Ասատրյանին:

Համագումարի պատվիրակները շնորհակալագրի արժանացրին Ե. Հակոբովային **երկարամյա, ակտիվ, բեղմնավոր, բարեխիղճ աշխատանքի, արհմիութենական շարժման մեջ անձնական ներդրման, բարեփոխումների իրականացման, միջազգային և տեղական արհմիութենական հարաբերություններում համերաշխության ամրապնդման, արհմիության անդամի աշխատանքային և սոցիալական հարցերի լուծման գործում պատրաստակամության և մարդկային լավագույն հատկանիշների դրսևորման համար**, առաջարկեցին նաև համագումարում ներկա ՀԱՄԿ-ի ներկայացուցիչներին՝ քայլեր ձեռնարկել ՀՀ վարչապետի կողմից Ե. Հակոբովային երկարամյա արհմիութենական աշխատանքի համար հուշամեդալի կամ շնորհակալագրի արժանանացնելու ուղղությամբ:

Ա. Ասատրյանն էլ իր հերթին շնորհակալություն հայտնեց պատվիրակներին վստահության համար և նշեց, որ **միայնակ ոչինչ անել հնարավոր չէ, միայն միասնական ուժերով կարելի է հասնել լավ արդյունքների և կոչ արեց առավել միասնական և համախմբած լինել:**

Ելնելով այն իրավիճակից, որ որոշ գործատուներ “Եկամտային հարկի մասին” ՀՀ օրենքը գործողության մեջ դնելու հետ կապված սխալմամբ փորձում են օրենքը տարածել նաև արհմիության անդամավճարի հաշվարկման և գանձման վրա՝ ՃՀՄ համագումարը ամրագրեց նաև ՃՀՄ անդամ կազմակերպությունների արհմիության անդամների անդամավճարի չափը՝ 1% արհմիության անդամի համախառն եկամտից՝ հաշվի առնելով նաև, որ ՃՀՄ կանոնադրությամբ ճյուղային արհմիության անդամ կազմակերպությունը պարտավոր է կատարել ճյուղային արհմիության ղեկավար մարմինների որոշումները:

Համագումարում քննարկված և որոշված կարևորագույն հարցերից էր նաև քաղճառայողների բազային աշխատավարձի բարձրացման հարցով ուղերձի հղումը ՀՀ նախագահին, ՀՀ ազգային ժողովի

նախագահին, ՀՀ վարչապետին: Պատվիրակների առաջարկով որոշվեց նաև ուսումնասիրել Երևան քաղաքի համայնքային ծառայողների աշխատավարձի բարձրացման և վերջիններիս սոցիալական փաթեթի հատկացնելու հնարավորությունները:

Համագումարը լսեց, քննարկեց նաև այլ հարցեր, մասնավորապես՝ Ե. Հակոբովան հետ կանչվեց ՀԱՄԿ-ի գործկոմի, խորհուրդի, Արհմիությունների միջազգային ֆեդերացիայի խորհուրդի կազմերից, փոխարենը նշված մարմիններ պատվիրակվեց նորընտիր նախագահ Ա. Ասատրյանը, վերընտրվեց ճյուղային միության վերստուգիչ հանձնաժողով, ՃՀՄ խորհրդի որոշ անդամներ փոխարինվեցին նորերով, ճյուղային միության 2012թ. գործունեությանը գերազանց գնահատական տրվեց և այլն:

Համագումարում հնչեցին նաև տարաբնույթ ելույթներ օրակարգային հարցերի շուրջ:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱԶԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Մեր ընթերցողը քաջատեղյակ է, որ ճյուղային հանրապետական միությունը բազմիցս և շարունակաբար աշխատանքներ է տանում քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացման ուղղությամբ: Կատարված վերջին քայլը ՃՀՄ համագումարի կողմից 23.02.2013թ. հղված ուղերձն էր ՀՀ նախագահին, ՀՀ ազգային ժողովի նախագահին ու ՀՀ վարչապետին: Ուղերձը տպագրվեց նաև “ԱԶԳ” օրաթերթում և “ԱՐՄՆՅՈՒԶ” ինտերնետային լրատվական կայքում: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ա. Պետրոսյանի կողմից ստացված պատասխանը, ի տարբերություն նախորդների, կարծես թե փոքր ինչ հուսադրող էր (?): Ստորև ներկայացնում ենք այն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՅԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա. ԱՍԱՏՐՅԱՆԻՆ**

Հարգելի տիկին Ասատրյան

Հայաստանի պետիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության 6-րդ համագումարի պատվիրակների դիմումը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության Նախագահին և Հայաստանի Հանրապետության վարչապետին, վերահասցեագրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

Դիմումում արժարձված, ինչպես նաև պետական ծառայության վարձատրության համակարգում առկա այլ խնդիրների համակարգային լուծման նպատակով ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ մշակում է պետական ծառայողների վարձատրության համակարգի բարեփոխումների հայեցակարգ՝ հիմք ընդունելով պետական ծառայության վարձատրության չափերի բարձրացման միջնաժամետ և երկարաժամկետ կոնկրետ սցենարները, որոնք ամրագրված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012-2017թթ. ծրագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2012-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի նախագծով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ աշխատավարձի մակարդակի վրա ազդող տնտեսական և սոցիալական ցուցանիշների վերլուծության և գնահատումների հիման վրա ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացվել են քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի չափի բարձրացման առաջարկներ՝ 2014-2016 թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտի նախագծով:

ՀԱՐԿԱՆՔՈՎ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԿ-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Կայացավ Հայաստանի Արհմիությունների Կոնֆեդերացիայի հերթական համագումարը: Համագումարի աշխատանքներին մեր ճյուղային միությունից մասնակցում էր 5 պատվիրակ՝ Ե. Հակոբովան՝ ՃՀՄ նախագահ, Լ.Խաչատրյանը՝ ՀԱՄԿ-ի ուսումնահետազոտական կենտրոնի տնօրեն, Ն. Մելքոնյանը՝ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ, Վ. Բաբաջանյանը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ, Ս. Մխիթարյանը՝ Խարբերդի մասնագիտացված մանկատան աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ:

Համագումարում առանցքային էին ՀԱՄԿ-ի նախագահի և տեղակալների ընտրությունները: Առաջադրված թեկնածուներից նախագահի պաշտոնում վերընտրվեց Էդուարդ Թումասյանը, իսկ տեղակալներ՝ Բորիս Խարատյանն ու Խաչիկ Առաքելյանը:

Հաստատվեց համագումարի աշխատակարգը, ձևավորվեցին աշխատանքային մարմինները, հաստատվեց ՀԱՄԿ-ի կանոնադրությունը նոր խմբագրությամբ, ընտրվեցին ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններ, հաստատվեց ՀԱՄԿ-ի 2012-2017թթ. գործունեության ծրագիրը և այլն:

Մեր ճյուղային միության նախագահության որոշմամբ ՀԱՄԿ-ի գործկում պատվիրակվեց ՃՀՄ նախագահը, ՀԱՄԿ-ի խորհուրդ՝ ՃՀՄ նախագահը, Հայաստանի պատմության թանգարանի աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ Մ.Կիրակոսյանը, ՀՀ ԲՄՓ գործակալության աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ Ա. Գևորգյանը, Աշտարակի տարածքային միության նախագահ Մ. Մաթևոսյանը, ՀԱՄԿ-ի վերստուգիչ հանձնաժողով՝ ՃՀՄ հաշվապահ Լ. Բաղդասարյանը:

Շնորհավորում ենք ՀԱՄԿ-ի նորընտիր ղեկավար կազմին և ակնկալում ենք արդյունավետ համագործակցություն և արհմիութենական շարժմանը խթանող գործունեություն:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

❖ Ս.թ. մարտի 30-ին ՃՀՄ նախագահության որոշմամբ “Արենա բոուլինգ” սրահում կազմակերպվեց բոուլինգի մրցույթ Երևան քաղաքի անդամ կազմակերպությունների միջև՝ արհմիության անդամակցության մոտիվացիան բարձրացնելու, առողջ ապրելակերպ քարոզելու և արհմիութենական կոլեկտիվներին համախմբելու նպատակով: Մրցում էին 12 կազմակերպությունների թիմեր: Ձևավորվեց ժյուրիի կազմը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ Ջ. Գրիգորյան, Հայաստանի պատմության թանգարանի աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ Ս. Կիրակոսյան, Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ Ս. Մկրտչյան:

Բուռն մրցապայքարի արդյունքում կազմակերպությունների մեջ հաղթող ճանաչվեց ՀՀ Էկոնոմիկայի նախարարության թիմը, 2-րդ և 3-րդ տեղերն զբաղեցրին համապատասխանաբար Հայաստանի պատմության թանգարանի և Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի թիմերը: ՀՀ Էկոնոմիկայի նախարարության թիմի 6 մասնակիցները հնարավորություն ստացան իրենց 2-օրյա անվճար հանգիստը Ծաղկաձորի “Ռիպա” առողջարանում անցկացնելու: 2-րդ տեղը զբաղեցրած Հայաստանի պատմության թանգարանի թիմը հնարավորություն ստացավ սրահում 1 ժամ անվճար բոուլինգ խաղալու, իսկ 3-րդ տեղը զբաղեցրած թիմը՝ նույն տեղում 1 ժամ անվճար բիլիարդ խաղալու: Լավագույն խաղացող ճանաչվեց Ալբերտ Բաղայանը՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունից, ում ևս “Ռիպա” առողջարանում 2-օրյա հանգստի հնարավորություն տրվեց (2 անձի համար), 2-րդ տեղում Արտակ Սիմոնյանն էր՝ “ՀՀ զբաղվածության պետական ծառայություն” գործակալությունից, 3-րդում՝

Արմինե Թոքմաջյանը՝ Երևանի քաղաքապետարանից: Հաղթողներին տրվեցին համապատասխան դիպլոմներ: Ժյուրիի որոշմամբ “Կազմակերպված թիմ” դիպլոմին արժանացավ Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի թիմը, իսկ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թիմի աղջիկներն արժանացան “Ամենահմայիչ թիմ” դիպլոմին: Մասնակից թիմերին տրվեցին դիպլոմներ մասնակցության համար:

❖ Ապրիլի 6-7-ին Ծաղկաձորի “Ռիպա” առողջարանում անցկացվեց հերթական խորհրդակցությունը արհմիութենական տարաբնույթ և ընթացիկ խնդիրների շուրջ: Խորհրդակցությանը մասնակցում էին ՃՀՄ նախագահության անդամներ, վերստուգիչ հանձնաժողովի անդամներ, ՃՀՄ անդամ կազմակերպությունների նորընտիր նախագահներ, Երևան քաղաքի և մոտակա տարածքների անդամ կազմակերպությունների նախագահներ:

Ներկաների ակտիվ մասնակցությամբ քննարկվեցին ոչ միայն նեղ արհմիութենական, այլև այնպիսի խնդիրներ, որոնք կնպաստեն արհմիութենական շարժման զարգացմանը: Հատուկ նշանակություն տրվեց ճյուղային միության կողմից կազմակերպված բուլինգի մրցույթին: Մասնակիցների առաջարկով քննարկվեցին նմանատիպ միջոցառումներ անցկացնելու հնարավոր ուղիները: Կարևորվեց հատկապես նախատեսվող մայիսամեկյան երթը: ՃՀՄ նախագահ Ա. Սաստրյանը կոչ արեց ակտիվ մասնակցություն ցուցաբերել երթին, մանավանդ, որ երթից հետո մասնակիցների համար նախատեսվում է “Գարեգին Նժդեհ” ֆիլմի ցուցադրումը “Մոսկվա” կինոթատրոնում:

Խորհրդակցությունը համատեղվեց մասնակիցների 1.5-օրյա հանգստով: Այդպիսով նշվեց նաև Մայրության և գեղեցկության տոնը:

Միջոցառումը կազմակերպվել էր ճյուղային միության միջոցներով:

❖ ՀԱՄԿ-ի առաջարկությամբ և ՃՀՄ նախագահության որոշմամբ ՀԱՄԿ-ի խորհրդի մշտական գործող հետևյալ հանձնաժողովներ պատվիրակվեցին՝ ՀԱՄԿ-ի սեփականության տնօրինման, օգտագործման և օտարման հարցերով հանձնաժողով՝ Անահիտ Սաստրյանը՝ ՃՀՄ նախագահ, աշխատավորների սոցիալ-տնտեսական, իրավական շահերի, աշխատանքի պաշտպանության և էկոլոգիայի հարցերով հանձնաժողով՝ Մարինե Մկրտչյանը՝ Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ, գենդերային հավասարության հարցերով հանձնաժողով՝ Հռիփսիմե Սառիկյանը՝ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ, երիտասարդական հանձնաժողով՝ Արտյոմ Հունանյանը՝ Հրազդանի տարածքային միության նախագահ:

* * * * *

Ճյուղային հանրապետական միությունը իր խոր վիշտն է հայտնում ՀՀ ոստիկանության պետական պահպանության վարչության աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ **Մուրադ Վարդանի Ոսկանյանի** մահվան կապակցությամբ:

Որպես արհմիութենական՝ նա մշտապես հանդես է բերել նվիրվածություն, ակտիվություն, գործի նկատմամբ բարձր պատասխանատվություն: Որպես ղեկավար՝ անսահման հարգանք էր վայելում ակտիվի շրջապատում: Քննարկվող հարցերի բազմակողմանի վերլուծությունը, անաչառությունը բարի ակնածանք են թողել ոչ միայն ներարհմիութենական շրջանակներում, այլև ճյուղային միության խորհրդի անդամների մոտ. անշուշտ, դա էր երաշխիքը ճյուղային միության հիմնադրման պահից միության նախագահության անդամ լինելու ...

Այլևս մեզ հետ չէ իր գործին անմնացորդ նվիրված հմուտ ու փորձառու կազմակերպիչը, աշխատանքային շահերի հետևողական պաշտպանը, վառ հոգու տեր, կենսուրախ ընկերը: Միտն ալևս ընկրկեց՝ թողնելով անավարտ գործեր, բազում հոգսեր, բարի ու անմոռաց հուշեր...

Սրտակից ընկերոջ ու հոգեհարազատ մարդու հիշատակը ընդմիշտ կմնա նրան ճանաչող բոլոր-բոլորի սրտերում:

